Արձանագրություն N 3
«ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21 հուլիսի 2020թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Ա. Մակարյանը և Գ. Հունանյանը,
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Բանակցությունների վերաբերյալ

«ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի ոչ գնային պահանջները բավարարող գնահատված մասնակից «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հետ գնի նվազեցման շուրջ բանակցությունները տեղի են ունեցել 20.07.2020 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Բանակցություններին մասնակցել է «Ջերմուկշին» ՓԲԸ-ի տնօրեն Կ. Ստեփանյանը:

Բանակցությունների ավարտին մասնակից «Ջերմուկշին» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից առաջարկվել է նոր գին՝ 25 549 992 ՀՀ դրամ՝ 25 650 000 ՀՀ դրամի փոխարեն:

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով բանակցությունների արդյունքը հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/5-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից հայտարարել «Ջերմուկշին» ՓԲԸ-ին,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում,
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուց հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակից «Ջերմուկշին» ՓԲԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Անդամներ _____ Ա. Սիմոնյան

_____ Ա. Մակարյան

_____ Գ. Հունանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան